

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ N 2/5**

ք.Երևան

15 հունվարի 2021թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 14.12.2020թ. Չկատարված հարկային պարտավորությունները գանձելու մասին թիվ 39761-20Ա որոշման դեմ «ՔԱՐ ԳԱՋ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 01247377) դիմում-բողոքը՝

**ՊԱՐԶԵՑ**

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից 14.12.2020թ. Չկատարված հարկային պարտավորությունները գանձելու մասին թիվ 39761-20Ա որոշման համաձայն «ՔԱՐ ԳԱՋ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին գանձման է առաջադրվել 8062301 ՀՀ դրամի չափով պարտավորություն:

«ՔԱՐ ԳԱՋ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի տնօրեն Վլադիմիր Յուցույանի կողմից 16.12.2020թ.-ին Հանձնաժողովին դիմում-բողոք է բերվել ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 14.12.2020թ. Չկատարված հարկային պարտավորությունները գանձելու մասին թիվ 39761-20Ա որոշման դեմ: Այնուհետև, «ՔԱՐ ԳԱՋ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից նաև հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 14.12.2020թ. Չկատարված հարկային պարտավորությունները գանձելու մասին թիվ 39761-20Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին: ՀՀ վարչական դատարանի 21.12.2020թ. որոշման համաձայն (գործ թիվ ՎԴ/10410/05/20) հայցադիմումն ընդունվել է վարույթ:

ՀՀ հարկային օրենսգրքի 442-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի համաձայն՝ հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովն ընդունում է հարկ վճարողի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին համապատասխան գրավոր որոշում, եթե դիմում-բողոք ներկայացնող հարկ վճարողը նույն պահանջով դիմել է դատարանին:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ «ՔԱՐ ԳԱՋ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի դիմում-բողոքի քննարկման վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

«ՔԱՐ ԳԱՋ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ



ՌԱՖԻԿ ՄԱՇԱԴՅԱՆ